# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3991-Ա « 14 » օգոստոսի 2026 թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 1-ին ենթակետը.

1.Երևանի քաղաքապետարանի կարիքների համար բազմապլատֆորմ LiDAR սքանավորման, շարժական քարտեզագրման, օդային տեղագրական և ֆոտոգրամետրիկ նկարահանման համակարգի ձեռքբերման գնման գործընթաց իրականացնելու նպատակով «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին օրենքով սահմանված կարգով սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում:

2.Լիազորել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին, որպես պատասխանատու ստորաբաժանում գնման գործընթացների շրջանակներում իրականացնել պայմանագրի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով պայմանագրի լուծման գործընթացը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին:

4.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԸՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246